ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

«Այլ իբրեւ եկն լրումն ժամանակին,
առաքեաց Աստուած զՈրդին իւր,
որ եղեւ ի կնոջէ, եւ եմուտ ընդ օրինօք:
Զի զնոսա որ ընդ օրինօքն իցեն՝ գնեսցէ,
զի մեք զորդեգրութիւն ընկալցուք»:
/ԳԱՂ. Դ 4-6/

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու կրոնական ու ազգային սովորույթներով հարուստ և առլեցուն տոներից մեկն է Տյառնընդառաջը, որ տոնացույցում նշվում է որպես «Տօն քառասնօրեայ գալստեանն Քրիստոսի ի Տաճարն»: Իբրև անշարժ տոն, այն նշվում է փետրվար 14-ին:

«Տյառնընդառաջ» նշանակում է Տիրոջը՝ Քրիստոսին ընդառաջ գնալ Նրա ծննդյան քառասներորդ օրը: Այս տոնն ունի նաև մի շարք ժողովրդական անվանումներ:

Հիսուսի ծնողները, որպես ավանդապահ ընտանիքի անդամներ, ըստ Մովսիսական օրենքի, իրենց անդրանիկ զավակին ծննդյան քառասուներորդ օրը տաճար տարան և ընծայաբերեցին Աստծուն: Տաճարում ապրում էր Սիմեոն անունով մի բարեպաշտ ծերունի, ում ի վերուստ, Ս. Հոգու միջոցով, պատգամված էր տեսնել Օծյալ Տիրոջը՝ Աշխարհի Փրկչին: Երբ Հիսուսին տաճար տարան, Սիմեոնը, նախախնամության հայտնությամբ, ապրեց Փրկչի տեսության գերագույն երջանկությունը: Իր ձեռքը վերցնելով մանկանը՝ օրհնեց Աստծուն և ասաց. «Այժմ, ով Տեր, համաձայն խոստումիդ, արձակիր ծառայիդ խաղաղությամբ...» /ՂՈՒԿ. Բ 29/:

Ինչպես միշտ, այս անգամ ևս, փետրվարի 13-ի երեկոյան, մարդաշատ էր Քրիստոսաէջ Մայրավանքը: Ներկա հավատավոր

հայորդիները եկել էին իրենց աղոթքն առաքելու առ Բարձրյալն Աստված և հնչող շարականների ու տաղերի շնորհիվ կրկին ընկալելու, ինչպես նաև հոգիներում անթեղելու «Լոյս ի Լուսոյ, ճառագայթ Փառաց, Հուր Կենդանի» խոսքերի խորախորհուրդ նշանակությունը:

Երեկոյան, հանդիսավոր ժամերգությունից հետո, Մայր տաճարում տեղի ունեցավ նախատոնակ և անդաստան: Նախատոնակի «Քրիստոս փառաց թագաւորն» տաղի շնորհիվ կրկին փառաբանվեց Լույսն աշխարհի՝ Հիսուս Քրիստոս, որպես թագավոր, և հիշատակվեց Նրա քառասնօրյա ընծայումն ի տաճար: Հընթացս «ճրագ լուցանելոյ», Սուրբ խորանից դեպի Իջման սուրբ սեղան բերվեց վառվող մոմը՝ լույսը, որից հետո կատարվեց անդաստան: Այնուհետև Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը հանդարտ ու անշտապ վառեց աշտանակների վրա դրված մյուս մոմերը, որոնցից տուն տանելու համար իրենց մոմերն էին վառում ներկա հավատացյալները:

Հավարտ եկեղեցական արարողության, հինավուրց սովորության համաձայն, եկեղեցու բակում կրակ վառվեց, որի շուրջբոլորը հավաքված ներկաների համար հակիրճ, սակայն գեղեցիկ ծրագրով հանդես եկան ճեմարանի սաները: Հնչեցին հոգևոր և հայրենասիրական երգեր, արտասանություններ:

Փետրվարի 14-ի առավոտյան Մայրավանքում մատուցվեց սուրբ և անմահ պատարագ: Օրվա պատարագիչն ու քարոզիչոն էր հոգեշնորհ Տ. Սեպուհ վարդապետ Զուլչյանը: Դիմելով ներկա բազմությանը՝ իր քարոզում հայր սուրբն ի մասնավորի հիշեցրեց օրվա խորհուրդը, Տյառնընդառաջի տոնակատարությանը հատուկ ազգային սովորություններն ու բարեպաշտական արարողությունները, հրավառության ձեռք բերած նոր իմաստն ու նշանակությունը:

Ավարտվեց սուրբ պատարագը: Սակայն ներկաներից յուրաքանչյուրն իր հոգում դարձյալ զգաց Լույս-Քրիստոսի ներկայությունը, ջերմացավ Նրանով, լուսավորվեց ավելի, որպեսզի հենց Տիրոջ օգնությամբ շարունակի հայ քրիստոնյայի այն առաքելությունը, որ որպես ավանդ է փոխանցվել սուրբ նախնիներից: